ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/205»

ք.Երևան «19» նոյեմբեր 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **28 015 500 (քսանութ միլիոն տասնհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն (4 669 250 (չորս միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ)**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 1-ին չափաբաժնի մասով՝ 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, 2-րդ չափաբաժնի մասով՝ 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, 3-րդ չափաբաժնի մասով՝ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, 4-րդ չափաբաժնի մասով՝ 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, 5-րդ չափաբաժնի մասով՝ 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, 6-րդ չափաբաժնի մասով՝ 0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով, 7-րդ չափաբաժնի մասով՝ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, 8-րդ չափաբաժնի մասով՝ 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, 9-րդ չափաբաժնի մասով՝ 0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով, 10-րդ չափաբաժնի մասով՝ 0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով, 11-րդ չափաբաժնի մասով՝ 0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 1-ին չափաբաժնի մասով՝ 15 (տասնհինգ) տոկոսի չափով, 2-րդ չափաբաժնի մասով՝ 1 (մեկ) տոկոսի չափով, 3-րդ չափաբաժնի մասով՝ 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, 4-րդ չափաբաժնի մասով՝ 3 (երեք) տոկոսի չափով, 5-րդ չափաբաժնի մասով՝ 15 (տասնհինգ) տոկոսի չափով, 6-րդ չափաբաժնի մասով՝ 20 (քսան) տոկոսի չափով, 7-րդ չափաբաժնի մասով՝ 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, 8-րդ չափաբաժնի մասով՝ 1 (մեկ) տոկոսի չափով, 9-րդ չափաբաժնի մասով՝ 3 (երեք) տոկոսի չափով, 10-րդ չափաբաժնի մասով՝ 3 (երեք) տոկոսի չափով, 11-րդ չափաբաժնի մասով՝ 2 (երկու) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է 1-ին չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 2-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 3-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 4-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 5-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 6-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 7-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 8-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 9-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, 10-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, իսկ 11-րդ չափաբաժնի մասով՝ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Գրանդ Քենդի» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մասիսի 31
Կենտրոնական գանձապետարան	Բանկը՝ «Հայբիզնես Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02593108	Հ/Հ՝ 11500049801001000
	ՀՎՀՀ՝ 02226764
Է.Կիրակոսյան ----------	Ա. Բաբայան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«19» նոյեմբեր 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/205 ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
		Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով						
1	15897200/13	• **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**	Հատ	950	4750000	5000	ք. Երևան Գայի 19	մինչև 20.12.2020թ.

		Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով						
2	15897200/17	• **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով:	Հատ	950	4750000	5000	ք. Երևան Շենգավի թ վարչակա ն շրջան	մինչև 20.12.2020թ.
		Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						

		Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • ~~**3 հատ մրգային համերով կարամել ձողիկի վրա**~~						
3	15897200/18	• **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով:	Հատ	950	3667000	3860	Արա Սարգսյան 5	մինչև 20.12.2020թ.
		Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						
4	15897200/12	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/	Հատ	950	3040000	3200	ք. Երևան, Տերյան 44	մինչև 20.12.2020թ.

		• **4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով:						
		Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						
5	15897200/15	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին:	Հատ	950	2660000	2800	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան	մինչև 20.12.2020թ.

		Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						
		Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով:						
6	15897200/10	• **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**	Հատ	950	2375000	2500	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան	մինչև 20.12.2020թ.
7	15897200/11	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի,	Հատ	950	2280000	2400	ք. Երևան, Դ. Անհաղթի 11	մինչև 20.12.2020թ.

		պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով:						
		• **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						
8	15897200/19	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի	Հատ	950	1900000	2000	ք. Երևան, Ավան վարչական շրջան	մինչև 20.12.2020թ.

		Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						
9	15897200/14	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ** շոկոլադե-**կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**	Հատ	950	1631150	1717	ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան	մինչև 20.12.2020թ.
10	15897200/16	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով):	Հատ	950	617500	650	ք. Երևան, Ա. Արմենակյան 272	մինչև 20.12.2020թ.

		Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով:						
		• **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված: • **3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի** հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, **Փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:** **Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:**						
11	15897200/9	Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,** • **1 տուփ կարամել** սառնաշաքարային (ամանորյա թեմատիկ պատկերով): Պարունակությունը. կարամել- թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաոյի, պոմադային – տարբեր մրգային համերով • **3 հատ մրգային** համերով կարամել ձողիկի վրա • **1 տուփ շոկոլադե-կաթնային վաֆլի** • **2 տուփ թխվածքաբլիթ** /փխրուն կամ բիսկվիթային թխվածք/ •**4 հատ** կոնֆետ մրգային մրգանուշ • **2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ** կրեմային միջուկով: • **2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ** մրգային միջուկով: • **3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե** - խտացրած կաթի հավելումով պատված շոկոլադով: • **2 հատ կլոր շոկոլադապատ զեֆիր** - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով • **2 հատ ուղղանկյունաձև վաֆլի** - կաթնային միջուկով, հատային փաթեթավորված:	Հատ	950	344850	363	ք. Երևան, Ա. Նուբարաշե ն վարչական շրջան	մինչև 20.12.2020թ.

		• 3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, նուշի հավելումով: Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ТРТС 021/2011, Փաթեթավորում՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» ТРТС 005/2011 տեխնիկական կանոնակարգերին: Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ: **Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումն ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջաններ:**						
		Փաթեթավորումը համաձայնեցվում է Գնորդի հետ:						

* *Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** *Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է եան ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային համակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

*** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" 22 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ՝ 02593108

Է.Կիրակոսյան՝ _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Գրանդ Քենդի» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մասիսի 31
Բանկը՝ «Հայբիզնես Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150004980100100 0
ՀՎՀՀ 02226764

Ա. Բաբայան՝ _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» նոյեմբեր 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/205 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	հաշվեհամար	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
				հունվար	հունվար փետրվար	հունվար մարտ	հունվար ապրիլ	հունվար մայիս	հունվար հունիս	հունվար հուլիս	հունվար օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	15897200/13	900032098577	Քաղցրավենիքի փաթեթներ											4750000	4750000	4750000
2	15897200/17	900022750542	Քաղցրավենիքի փաթեթներ											4750000	4750000	4750000
3	15897200/18	900052473478	Քաղցրավենիքի փաթեթներ											3667000	3667000	3667000
4	15897200/12	900012213741	Քաղցրավենիքի փաթեթներ											3040000	3040000	3040000
5	15897200/15	900022600457	Քաղցրավենիքի փաթեթներ											2660000	2660000	2660000
6	15897200/10	900032313232	Քաղցրավենիքի փաթեթներ											2375000	2375000	2375000

7	15897200/11	900032542194	Քաղցրավենիքի փաթեթներ												2280000	2280000
8	15897200/19	900032479199	Քաղցրավենիքի փաթեթներ											1900000	1900000	1900000
9	15897200/14	900052476372	Քաղցրավենիքի փաթեթներ											1631150	1631150	1631150
10	15897200/16	900012416120	Քաղցրավենիքի փաթեթներ											617500	617500	617500
11	15897200/9	900022701289	Քաղցրավենիքի փաթեթներ											344850	344850	344850

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ՝ 02593108

Է.Կիրակոսյան՝ _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Գրանդ Քենդի» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մասիսի 31
Բանկը՝ «Հայբիզնես Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150004980100100 0
ՀՎՀՀ՝ 02226764

Ա. Բաբայան՝ _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« » 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Գրանդ Քենդի» ՍՊԸ
գտնվելու վայրը՝ ՀՀ ք.Երևան, Մասիսի 31
հհ՝ 11500049801001000

հվհհ 02226764

Գնորդ
Երևանի քաղաքապետարան
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ՝ 02593108

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Ապրանքի մատակարարման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «նոյեմբերի» 2020թ.
Պայմանագրի համարը՝ **N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/205»**
Գնորդը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Գնորդ) և «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող) միջև 2020թ. _____ -ին կնքված **N N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/205»** պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2020թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝374 10 592020
Ֆաքս՝
Էլ.փոստ՝

Տպված է՝19/11/2020 16:11 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 024686

Ամսաթիվ	19/11/2020	Նույնացուցիչ	21c8151a-4230-4859-afd3-6f7860f5d61a
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150004980100100	900008000664	AMD	2,801,550.00
Վճարողի անվանում	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ՍՊԸ		
Վճարողի բանկ	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ		
ՀՎՀՀ	02226764		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	99		
Շահառուի անվանում	Երևանի քաղաքապետարան		
Գումարը բառերով	Երկու միլիոն ութ հարյուր մեկ հազար հինգ հարյուր հիսուն դրամ		
Նպատակ	Որակավորման ապահովում պայմանագիր ԵՔ ԳՀԱՊՁԲ 20/205		
Ստորագրող	Gevorg Miribyan	Ստորագրող	Andranik Harutyunyan
Ստորագրության կարգ	I	Ստորագրության կարգ	II
Ամսաթիվ	19/11/2020 15:57:52.000	Ամսաթիվ	19/11/2020 15:45:36.000
Սարքի անվանում	DIGIPASS GO ընտանիքի սարք	Սարքի անվանում	DIGIPASS GO ընտանիքի սարք
Սարքի սերիալ N	3592679869	Սարքի սերիալ N	3592679876
Ստորագրություն	519749	Ստորագրություն	523150

Կատարված է բանկի կողմից

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝374 10 592020
Ֆաքս՝
Էլ.փոստ՝

Տպված է՝19/11/2020 16:48 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 024685

Ամսաթիվ	19/11/2020	Նույնացուցիչ	9fd0947e-09ad-4a7a-a65c-9db2773a8b5b
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150004980100100	900008000698	AMD	28,015,500.00
Վճարողի անվանում	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ՍՊԸ		
Վճարողի բանկ	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ		
ՀՎՀՀ	02226764		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	99		
Շահառուի անվանում	Երևանի քաղաքապետարան		
Գումարը բառերով	Քսանութ միլիոն տասնհինգ հազար հինգ հարյուր դրամ		
Նպատակ	Որակավորման ապահովում պայմանագիր ԵՔ ԳՀԱՊՁԲ 20/205		
Ստորագրող	Andranik Harutyunyan	Ստորագրող	Gevorg Miribyan
Ստորագրության կարգ	II	Ստորագրության կարգ	I
Ամսաթիվ	19/11/2020 15:45:36.000	Ամսաթիվ	19/11/2020 15:57:52.000
Սարքի անվանում	DIGIPASS GO ընտանիքի սարք	Սարքի անվանում	DIGIPASS GO ընտանիքի սարք
Սարքի սերիալ N	3592679876	Սարքի սերիալ N	3592679869
Ստորագրություն	523150	Ստորագրություն	519749

Կատարված է բանկի կողմից